

« 13 » հոկտեմբեր 2025 թ. No 139 - Ն

**«ԲԺՇԿԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՄԱՔՐՄԱՆԸ, ԱԽՏԱՀԱՆՄԱՆԸ,
ՆԱԽԱՄԱՆՐԷԱԶԵՐԾՄԱՆԸ ԵՎ ՄԱՆՐԷԱԶԵՐԾՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ
ՊԱՀԱՆՋՆԵՐ» ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2015
ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 48-Ն ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ
ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Հանրային առողջապահության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել «Բժշկական արտադրատեսակների մաքրմանը, ախտահանմանը, նախամանրէազերծմանը և մանրէազերծմանը ներկայացվող պահանջներ» հանրային առողջապահական նորմատիվը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի ««Բժշկական նշանակության արտադրատեսակների մաքրմանը, ախտահանմանը, նախամանրէազերծմանը և մանրէազերծմանը ներկայացվող պահանջներ» N 3.1.1-029-2015 սանիտարական կանոնները և հիգիենիկ նորմատիվները հաստատելու մասին» N 48-Ն հրամանը:
3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասնհինգերորդ օրը:

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

**«ԲԺՇԿԱԿԱՆ ԱՐՏԱՊՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՄԱՔՐՄԱՆԸ, ԱԽՏԱՀԱՆՄԱՆԸ,
ՆԱԽԱՄԱՆՐԷԱԶԵՐԾՄԱՆԸ ԵՎ ՄԱՆՐԷԱԶԵՐԾՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ
ՊԱՀԱՆՋՆԵՐ» ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ**

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Բժշկական արտադրատեսակների մաքրմանը, ախտահանմանը, նախամանրէազերծմանը և մանրէազերծմանը ներկայացվող պահանջներ» հանրային առողջապահական նորմատիվը (այսուհետ՝ Նորմատիվ) նախատեսված է Հայաստանի Հանրապետության տարածքում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների (այսուհետ՝ բժշկական կազմակերպություն) համար, որոնք իրականացնում են բժշկական արտադրատեսակների մաքրում, ախտահանում, նախամանրէազերծում, մանրէազերծում (այսուհետ միասին նաև՝ մշակում), ինչպես նաև՝ վարսահարդարման (մատնահարդարում, ոտնահարդում, դիմահարդարում), կոսմետիկ միջամտություններ (մաշկի հիգիենիկ մաքրում, էպիլյացիա, դաջվածք, դակում, մերսում) իրականացնող ոչ բժշկական կազմակերպությունների (այսուհետ՝ ոչ բժշկական կազմակերպություն) համար:

2. Նորմատիվը սահմանում է բժշկական և ոչ բժշկական կազմակերպություններում (այսուհետ միասին նաև՝ Կազմակերպություններ) բժշկական արտադրատեսակների դասակարգմանը, մշակման իրականացմանը և մշտադիտարկմանը ներկայացվող պահանջները:

3. Կազմակերպություններում բժշկական արտադրատեսակների մշակումը կատարվում է անմիջապես օգտագործումից հետո՝ պահպանելով ողջ գործընթացի հոսքայնությունը: Կազմակերպություններում բժշկական արտադրատեսակների մշակումն իրականացվում է Կազմակերպությունում, իսկ անհնարինության դեպքում՝ պայմանագրային հիմունքներով համագործակցում է գործունեության նման տեսակով զբաղվելու իրավունք ունեցող կազմակերպության հետ:

4. Բժշկական կազմակերպություններում բժշկական արտադրատեսակների մաքրումը, ախտահանումը և նախամանրէազերծումը կարող է իրականացվել անմիջապես օգտագործումից հետո՝ տեղում, իսկ մանրէազերծումը՝ մանրէազերծման սենյակի մանրէազերծման գոտում:

5. Բժշկական արտադրատեսակների մշակման գործընթացում ներգրավված բուժանձնակազմը աշխատանքի ընթացքում կրում է հատուկ պաշտպանիչ արտահագուստ՝ ձեռնոց, դիմակ, բժշկական գլխարկ, ակնոց և խավաթ:

ԳԼՈՒԽ 2. ԲԺՇԿԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ

6. Բժշկական արտադրատեսակները՝ ըստ վարակի փոխանցման ռիսկի դասակարգվում են.

1) ցածր վտանգավորության՝ շփվում են միայն չվնասված մաշկի հետ, չեն խախտում մաշկի ամբողջականությունը, չեն շփվում լորձաթաղանթի հետ: Ցածր վտանգավորության բժշկական արտադրատեսակները ախտահանվում են,

2) վտանգավոր՝ շփվում են լորձաթաղանթների և մաշկի հետ՝ չխախտելով դրանց ամբողջականությունը: Վտանգավոր բժշկական արտադրատեսակները ենթարկվում են բարձր մակարդակի ախտահանման: Բարձր մակարդակի ախտահանումից հետո բժշկական արտադրատեսակները լվացվում են մանրէազերծ ջրով կրկնակի, այնուհետև չորացվում մանրէազերծ սավանով: Էնդոսկոպները (ներդիտակները) լվանալուց հետո չորացվում են 70% սպիրտով կամ օդի շիթով,

3) խիստ վտանգավոր՝ ներթափանցում են հյուսվածքներ, օրգաններ, անոթային համակարգ կամ շփվում են կենսահեղուկների հետ: Խիստ վտանգավոր բժշկական արտադրատեսակները մանրէազերծվում են:

7. Կազմակերպություններում բժշկական արտադրատեսակների մշակման փուլերում, ինչպես նաև անձնակազմի ձեռքերի և սենքերում մակերեսների ախտահանման համար օգտագործվում են Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի հրամանով հաստատված կից մեթոդական ուղեցույց ունեցող ախտահանիչ միջոցներ (այսուհետ՝ Միջոցներ):

8. Բարձր մակարդակի ախտահանված կամ մանրէազերծված բժշկական արտադրատեսակներն ընդհանուր բժշկական արտադրատեսակների խմբից բուժանձնակազմը յուրաքանչյուր անգամ վերցնում է միայն մանրէազերծ ձեռնոցով կամ ունելիով (կորնցանգով):

9. Կազմակերպություններում կիրառվող բժշկական արտադրատեսակները, բժշկական տեխնիկան ունենում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ անվտանգությունը հաստատող փաստաթղթեր և մակնշում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի օգոստոսի 1-ի թիվ 1009-Ն որոշման N 10 հավելվածի 18-րդ բաժնի:

ԳԼՈՒԽ 3. ԲԺՇԿԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՄԱՔՐՄԱՆ, ԱԽՏԱՀԱՆՄԱՆ, ՆԱԽԱՄԱՆՐԷԱԶԵՐԾՄԱՆ ԵՎ ՄԱՆՐԷԱԶԵՐԾՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10. Բժշկական կազմակերպությունում բժշկական արտադրատեսակների մշակման գործընթացի հսկողությունն իրականացնում է բժշկական կազմակերպության ղեկավարի հրամանով նշանակված պատասխանատու անձը՝ համաճարակաբանը կամ վարակի հսկողության պատասխանատուն (այսուհետ՝ պատասխանատու), կամ բժշկական կազմակերպությունը պայմանագրային հիմունքներով համագործակցում է գործունեության նման տեսակով զբաղվելու իրավունք ունեցող կազմակերպության հետ:

11. Ելնելով բժշկական կազմակերպության գործունեության տեսակներից՝ բժշկական կազմակերպության ղեկավարի հրամանով անհրաժեշտության դեպքում յուրաքանչյուր բաժանմունքում նշանակվում է բժշկական արտադրատեսակների մշակման գործընթացի պատասխանատու:

12. Ոչ բժշկական կազմակերպություններում բժշկական արտադրատեսակների մշակումն ապահովելու համար պատասխանատու է տվյալ կազմակերպության ղեկավարը կամ ղեկավարի կողմից նշանակված պատասխանատուն:

13. Բժշկական կազմակերպությունում պատասխանատուն բժշկական կազմակերպության ղեկավարի հաստատմանն է ներկայացնում գործողությունների պլան, որը կարող է փոփոխվել ըստ անհրաժեշտության և ներառում է հետևյալը.

1) բժշկական արտադրատեսակների մշակման գործընթացում ներգրավված բուժանձնակազմի և պատասխանատուների անվանացանկը,

2) բժշկական արտադրատեսակների դասակարգումը՝ ըստ վտանգավորության աստիճանի, և համաձայն դասակարգման՝ դրանց մշակման մեթոդը:

14. Բժշկական կազմակերպությունում պատասխանատուն.

1) բժշկական արտադրատեսակների մշակման աշխատանքներում ներգրավված բուժանձնակազմին ուսուցանելու նպատակով տարեկան առնվազն մեկ անգամ իրականացնում է դասընթաց, որն արձանագրվում է, դասընթացի մասնակիցները ստորագրում են՝ փաստելով իրենց մասնակցության մասին,

2) մշակում և բժշկական կազմակերպության ղեկավարի հաստատմանն է ներկայացնում բժշկական արտադրատեսակների մշակման ընթացակարգերը նկարագրող փաստաթուղթ,

3) նոր ընդունվող բուժաշխատողին հրահանգավորում է ստորև ներկայացվածի վերաբերյալ (հրահանգավորման գործընթացն արձանագրվում է, բուժաշխատողը ստորագրում է արձանագրությունը՝ փաստելով իրազեկման մասին)։

ա. ոլորտում առկա իրավական ակտերի պահանջների,

բ. անհատական պաշտպանության միջոցների կիրառման,

գ. քիմիական կամ կենսաբանական ազդակի ենթարկման դեպքը գրանցելու և հայտնելու կարգի,

դ. մաշկի ամբողջականության խախտման դեպքում միջամտություն իրականացնելու վտանգների և այդ դեպքում միջամտություն չկատարելու պահանջի,

ե. տեղեկատվություն է տրամադրում բոլոր այն կենսաբանական և քիմիական ազդակների մասին, որոնց ազդեցությանը բուժաշխատողը կարող է ենթարկվել բժշկական միջամտություն իրականացնելիս։

ԳԼՈՒԽ 4. ԲԺՇԿԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՄԱՔՐՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ

15. Կենսահեղուկներով աղտոտված բժշկական արտադրատեսակները օգտագործումից անմիջապես հետո ենթարկվում են մաքրման՝ մաքրման փուլում օգտագործելու համար նախատեսված Միջոցով՝ դրան կից հրահանգին համապատասխան։

16. Խստորեն պահպանվում են բժշկական արտադրատեսակների մաքրմանը ներկայացվող պահանջները՝ խտությունը, ռեժիմը՝ կատարելով գրանցումներ գրանցամատյանում՝ համաձայն Նորմատիվի Ձև 4-ի։

ԳԼՈՒԽ 5. ԲԺՇԿԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԱԽՏԱՀԱՆՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ

17. Միջոցներով կատարվող աշխատանքի հիմնական պահանջներն են.

1) Միջոցի աշխատանքային լուծույթը պատրաստվում է տվյալ բաժանմունքում նշանակված պատասխանատուի կողմից, այդ նպատակի համար նախատեսված բնական կամ արհեստական ներհուս-արտաձիգ օդափոխությամբ հատուկ սենքում,

2) Միջոցի աշխատանքային լուծույթի պատրաստման համար օգտագործվում է մաքուր, չոր, կափարիչով ամուր փակվող, առանց վնասվածքների տարա,

3) խստորեն պահպանվում է բժշկական արտադրատեսակների ախտահանման ռեժիմը, որի մասին կատարվում է գրանցում գրանցամատյանում՝ համաձայն Նորմատիվի Ձև 4-ի:

18. Բժշկական արտադրատեսակների վրացման համար օգտագործվող պարագաները (խոզանակ, սպունգ) Միջոցի մեջ չեն պահվում, դրանք պահվում են ախտահանելուց հետո չոր վիճակում՝ մակնշված տարայի մեջ:

19. Միջոցների աշխատանքային լուծույթների համար նախատեսված տարաները մակնշվում են Միջոցի անվանման, խտության, նշանակության («մաքրման», «ախտահանման», «նախամանրէազերծման», «մանրէազերծման»), պատրաստման ամսաթվի (օր, ամիս, տարի), պիտանիության ժամկետի վերաբերյալ:

20. Միջոցների աշխատանքային լուծույթների համար նախատեսված տարաների ծավալը և լուծույթի ծավալն ապահովվում են բժշկական արտադրատեսակների ամբողջական ընկղմումը լուծույթի մեջ՝ պահպանելով բժշկական արտադրատեսակների վրա լուծույթի շերտի առնվազն 1 սմ հաստություն: Բժշկական արտադրատեսակներն ընկղմվում են քանդված և առանձնացված վիճակում, իսկ փակվող մասերն ընկղմվում են բաց վիճակում:

**ԳԼՈՒԽ 6. ԲԺՇԿԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՄԱՆՐԷԱԶԵՐԾՄԱՆԸ ԵՎ
ԴՐԱ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ
ՊԱՀԱՆՋՆԵՐ**

21. Ախտահանումից հետո իրականացվում է բժշկական արտադրատեսակների նախամանրէազերծում կամ այն համատեղվում է ախտահանման հետ մեկ գործընթացում:

22. Բժշկական արտադրատեսակների նախամանրէազերծման որակը գնահատվում է զգայորոշիչների (ինդիկատորներ) միջոցով՝ արյան հետքերի և

մաքրման փուլում օգտագործված Միջոցի առկայության որոշման համար: Մաքրման փուլում օգտագործված Միջոցի առկայությունը որոշվում է այն դեպքում, երբ Միջոցի աշխատանքային լուծույթի ջրածնային ցուցիչը՝ pH–ը 8,5-ից բարձր է:

23. Մաքրման, ախտահանման, նախամանրէազերծման որակի մշտադիտարկումն իրականացվում է յուրաքանչյուր գործընթացի ընթացքում՝ ստուգիչ փորձով. ստուգվում են միաժամանակ մշակված բժշկական արտադրատեսակների 10%-ը, բայց երեքից ոչ պակաս:

24. Նախամանրէազերծման որակի մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ գրանցումներն իրականացվում են համապատասխան գրանցամատյանում՝ համաձայն Նորմատիվի Ձև 4-ի:

25. Արյան հետքերի հայտնաբերման դեպքում մշակման ենթարկված բժշկական արտադրատեսակների ողջ քանակը կրկնակի մշակվում է՝ սկսած մաքրման փուլից մինչև արյան հետքերի ամբողջական բացակայությունը:

26. Մաքրման փուլում օգտագործված Միջոցի հետքերի հայտնաբերման դեպքում մշակման ենթարկված բժշկական արտադրատեսակների ողջ քանակը լվացվում է հոսող ջրով՝ մինչև Միջոցի հետքերի ամբողջական բացակայությունը:

ԳԼՈՒԽ 7. ԲԺՇԿԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՄԱՆՐԷԱԶԵՐԾՄԱՆԸ ԵՎ ԲԱՐՁՐ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԱԽՏԱՀԱՆՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ

27. Բժշկական կազմակերպությունում մանրէազերծման սենյակը բաժանվում է 3 գոտու՝ ապաբաղարկման (բժշկական արտադրատեսակների մաքրում, ախտահանում, նախամանրէազերծում), փաթեթավորման և մանրէազերծման: Ապաբաղարկման գոտին մյուս գոտիներից տարանջատվում է մշակման ենթարկվող նյութից շարժական կամ ստացիոնար ֆիզիկական պատնեշով (միջնապատով): Մանրէազերծման գոտու կամ բաժանմունքների մանրէազերծման սենյակների օդը ախտահանվում է մանրէասպան լամպով, և սարքի աշխատանքի հսկման վերաբերյալ գրանցումներ են կատարվում Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2025 թվականի հունիսի 30-ի N 56-Ն հրամանի Ձև 2-ով սահմանված գրանցամատյանում:

28. Մանրէազերծման սենյակի բացակայության դեպքում արտադրատեսակների մշակման փուլերն իրականացվում են տեղում՝ ապահովելով Նորմատիվի 27-րդ կետի պահանջները:

29. Մանրէագերծման սենյակն ապահովվում է բնական օդափոխությամբ կամ ներհոս-արտաձիգ օդափոխության համակարգով: Մանրէագերծման սենյակի պատերը, առաստաղն ու հատակը, կահավորման մակերեսները լինում են հարթ և ամբողջական, ջրակայուն, լվացվող և ախտահանվող ծածկով, առանց քիվերի և զարդարանքների:

30. Բժշկական կազմակերպությունում մանրէագերծման սենյակն ապահովվում է երկտեղանի լվացարանով՝ գործիքների մշակման համար:

31. Ֆիզիկական (գոլորշային, չոր օդով) կամ քիմիական (գազային, օզոնային) մեթոդներով մանրէագերծման նպատակով օգտագործվում են ստուգաչափված սարքեր և սարքավորումներ՝ դրանց ուղեկցող հրահանգին համապատասխան:

32. Բժշկական արտադրատեսակների գոլորշային մանրէագերծման պահանջներն են.

1) գոլորշային մանրէագերծումը իրականացնում է համապատասխան ուսուցում անցած և մանրէագերծող սարքի հետ աշխատանքի թույլտվություն ունեցող աշխատողը,

2) բժշկական արտադրատեսակների գոլորշային մանրէագերծումն իրականացվում է.

ա. մանրէագերծման տուփերի (բիքս) մեջ՝ առանց փաթեթավորման,

բ. մանրէագերծման տուփերի մեջ՝ փաթեթավորված,

գ. առանց մանրէագերծ տուփերի՝ փաթեթավորված,

3) փաթեթավորման նպատակով կիրառվում են թղթյա (խոնավության նկատմամբ կայուն) պարկեր, ջերմակայուն պոլիէթիլենային փաթեթներ, քաթան, երկշերտ բամբակյա կտոր, բուսական մագաղաթ, պոլիվինիլքլորիդային պլաստիկ և կրաֆթ թուղթ,

4) բժշկական արտադրատեսակներն ազատ դասավորվում են գոլորշային մանրէագերծող սարքի խցիկում և մանրէագերծման տուփերում, պարկերում և փաթեթներում, որոնք բեռնվում են ոչ խիտ, քան մանրէագերծող սարքի խցիկի կամ մանրէագերծման տուփի ծավալի 70%-ը կամ երկու երրորդը (2/3-ը)՝ հերմետիկորեն փակելով մանրէագերծման տուփի կափարիչը,

5) մանրէագերծման տուփի վրա նշվում է բաժանմունքը, համարակալված լրակազմը,

6) նախքան մանրէագերծումը՝ մանրէագերծման տուփը գոտևորող մետաղական գոտին բացվում է,

- 7) մանրէագերծման տուփերը գոլորշային մանրէագերծող սարքում դասավորվում են այնպես, որ դրանց անցքերը դասավորված լինեն գոլորշու շարժման ուղղությանը փոխուղղահայաց,
- 8) գոլորշային մանրէագերծող սարքում մանրէագերծման տուփի և սարքի դռան միջև ընկած տարածությունը լինում է 15 սանտիմետրից ոչ պակաս,
- 9) փափուկ վիրակապական նյութով բեռնված մանրէագերծման տուփերը տեղադրվում են գոլորշու մղման ծորակից հեռու,
- 10) մանրէագերծման ավարտից հետո մանրէագերծման տուփը գոտևորող մետաղական գոտին փակվում է, նշվում է ամսաթիվը, ժամը և մանրէագերծումը կատարող բուժաշխատողի ստորագրությունը,
- 11) գոլորշային մեթոդով մանրէագերծման սարքերի աշխատանքային ռեժիմի գրանցումները իրականացվում են համապատասխան գրանցամատյանում՝ համաձայն Նորմատիվի Ձև 1-ի:

33. Բժշկական արտադրատեսակների՝ չոր օդով մանրէագերծման պահանջներն են.

- 1) նախքան չոր օդով մանրէագերծում սկսելը, բժշկական արտադրատեսակները չորացվում են մինչև տեսանելի խոնավության վերանալը,
- 2) չոր օդով մանրէագերծված բժշկական արտադրատեսակների փաթեթավորման ժամկետները սահմանվում են արտադրողների կողմից առաջարկվող հրահանգներին համապատասխան,
- 3) չոր օդով մանրէագերծող սարքի մետաղական ցանցի վրա բժշկական արտադրատեսակները դասավորվում են մեկ շերտով, առանց իրար հպվելու, բացվող գործիքները բացված վիճակում,
- 4) խոշոր բժշկական արտադրատեսակները տեղադրվում են մանրէագերծող սարքի վերին հատվածում, որպեսզի դրանք չխոչընդոտեն դեպի վեր տաք օդի հոսքին,
- 5) չոր օդով մանրէագերծող սարքերի աշխատանքային ռեժիմի գրանցումներն իրականացվում են համապատասխան գրանցամատյանում՝ համաձայն Նորմատիվի Ձև 2-ի:

34. Բժշկական արտադրատեսակների գլասպերլենային մանրէագերծման պահանջներն են.

- 1) գլասպերլենային մանրէագերծումը կիրառվում է այն բժշկական արտադրատեսակների համար, որոնց չափը չի գերազանցում 52 մմ-ը,

2) մանրէագերծման համար բժշկական արտադրատեսակները տեղադրվում են շիկացած ապակյա գնդիկներով լցված խցիկի մեջ՝ առնվազն 15 մմ խորությամբ: Մանրէագերծման տևողությունը ընտրվում է տվյալ սարքի կիրառման հրահանգի համաձայն:

35. Քիմիական նյութերի լուծույթներով մանրէագերծման պահանջներն են.

1) մանրէագերծման համար օգտագործվող աշխատանքային լուծույթի նոսրացումից խուսափելու համար, բժշկական արտադրատեսակները մանրէագերծման են ենթարկվում չոր վիճակում՝ պահպանելով տվյալ նյութի կից հրահանգով պահանջվող մանրէագերծման ռեժիմը,

2) բժշկական արտադրատեսակների բոլոր խոռոչներն ու խողովակները լցվում են աշխատանքային լուծույթով և մանրէագերծման ողջ ընթացքում գործիքի վրա ապահովվում է 1 սմ-ից ոչ պակաս լուծույթի շերտի հաստությունը,

3) բժշկական արտադրատեսակները լուծույթից հանելու, մանրէագերծ ջրով վանալու և չորացնելու ողջ ընթացքում բուժանձնակազմն օգտագործում է անհատական պաշտպանության միջոցներ՝ դիմակ, խալաթ, բժշկական գլխարկ և ձեռնոց,

4) մանրէագերծող նյութի մնացորդները բժշկական արտադրատեսակների վրայից վացվում են առատ մանրէագերծ ջրով՝ ասեպտիկ պայմաններում, դասավորվում են մանրէագերծ սեղանի վրա կամ տեղադրվում են մանրէագերծ տուփերում մանրէագերծ սավանով կամ թանգիֆե անձեռոցիկով փաթաթված,

5) բազմակի օգտագործման համար նախատեսված քիմիական լուծույթներ կիրառելիս, յուրաքանչյուր օգտագործումից առաջ, թեստ-զոլի օգնությամբ որոշվում է լուծույթի պիտանելիությունը՝ ազդող նյութի արդյունավետ նվազագույն խտությունը: Եթե զգայորոշիչը չի փոխում իր գույնը, ապա մանրէագերծող նյութի աշխատանքային լուծույթի օգտագործումը դադարեցվում է և պատրաստվում է նոր աշխատանքային լուծույթ,

6) քիմիական մեթոդով մանրէագերծման կամ բարձր մակարդակի ախտահանման ռեժիմի հսկողության արդյունքները գրանցվում են գրանցամատյանում՝ համաձայն Նորմատիվի Ձև 3-ի:

36. Գազային մանրէագերծող սարքերում մինչ գազային մանրէագերծումը բժշկական արտադրատեսակները չորացվում են:

37. Էթիլեն օքսիդով մանրէագերծման պահանջներն են.

1) մանրէագերծման են ենթարկվում «վտանգավոր», «խիստ վտանգավոր» բժշկական արտադրատեսակները, որոնք ջերմազգայուն են և ենթակա չեն ինչպես չոր օդով, այնպես էլ գոլորշային մանրէագերծման,

2) էթիլեն օքսիդով բժշկական արտադրատեսակների մանրէագերծումն իրականացվում է հատուկ այդ մեթոդի համար նախատեսված փաթեթների մեջ, իսկ փաթեթները տեղափոխվում են փակ վիճակում՝ տուփերով կամ գործվածքե պարկերով:

38. Զրաձնի գերօքսիդի հիմքի վրա պլազմային մանրէագերծումն իրականացվում է միայն փաթեթավորված:

39. Օզոնային մեթոդով մանրէագերծումն իրականացվում է հատուկ օզոնային մանրէագերծող սարքերում: Դրանցից յուրաքանչյուրում բժշկական արտադրատեսակների մանրէագերծման ռեժիմը և փաթեթավորման պահանջները տարբեր են և կատարվում են սարքը արտադրողի հրահանգներին համապատասխան:

ԳԼՈՒԽ 8. ՄԱՆՐԷԱԶԵՐԾ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐ

40. Փաթեթավորմանը ներկայացվող պահանջներն են.

1) յուրաքանչյուր փաթեթի վրա նշվում է մանրէագերծման ամսաթիվը,

2) պիտանիության ժամկետը չլրացած, սակայն վնասված, խոնավացած, պատռված, ծակված փաթեթները կրկին ենթարկվում են ախտահանման, նախամանրէագերծման և մանրէագերծման,

3) մանրէագերծ բժշկական արտադրատեսակների փաթեթավորման տեսակները, մանրէագերծումից հետո փաթեթների պահպանման ժամկետները ներկայացված են Նորմատիվի Աղյուսակ 1-ում,

4) գոլորշային մանրէագերծված բժշկական արտադրատեսակների պահպանման ժամկետները պայմանավորված են մանրէագերծման տուփի և փաթեթավորման տեսակով.

ա. ցանկացած տեսակի մանրէագերծման տուփում, մեկ անգամ այն բացելուց հետո մանրէագերծ բժշկական արտադրատեսակները պահվում են մինչև 24 ժամ,

բ. չբացված՝ առանց ֆիլտրի մանրէագերծման տուփում պահվում են մինչև 72 ժամ,

գ. չբացված՝ ֆիլտր ունեցող մանրէագերծման տուփում պահվում են մինչև 21 օր,

5) մանրէագերծ սեղանը պատրաստվում է անմիջապես բժշկական միջամտությունից առաջ: Առանց փաթեթավորման մանրէագերծված բժշկական արտադրատեսակները դասավորվում են մանրէագերծ սեղանի վրա: Մանրէագերծ սեղանը պատրաստելուց հետո նշվում է պատրաստման ամսաթիվը, ժամը, և մանրէագերծ սեղանը պիտանի է օգտագործման առավելագույնը 6 ժամ, 6 ժամից հետո չօգտագործված բժշկական արտադրատեսակները ենթակա են մաքրման, ախտահանման, նախամանրէագերծման և մանրէագերծման, իսկ վերջնաժամկետը լրացած, սակայն չօգտագործած բժշկական արտադրատեսակները (մանրէագերծման տուփերում, փաթեթներում) ենթակա են միայն մանրէագերծման,

6) ցանկացած տեսակի մանրէագերծման տուփը բացելուց հետո նշվում է բացման ամսաթիվը, ժամը:

41. Բժշկական արտադրատեսակների օդային մանրէագերծման պահանջներն են.

1) չոր օդով մանրէագերծող սարքերում բժշկական արտադրատեսակների մանրէագերծումը կատարվում է առանց փաթեթավորման մետաղական ցանցի վրա, կամ փաթեթավորված՝ առանց տուփերի,

2) տուփի կամ փաթեթի վրա նշվում է մանրէագերծման ամսաթիվը, ժամը և մանրէագերծում կատարողի ստորագրությունը:

42. Օգտագործելուց առաջ ստուգվում է մանրէագերծ բժշկական արտադրատեսակների փաթեթի ամբողջականությունը: Փաթեթավորված բժշկական արտադրատեսակներն օգտագործվում են փաթեթավորման նյութի ամբողջականության դեպքում:

43. Մանրէագերծումից հետո փաթեթավորված բժշկական արտադրատեսակները տեղափոխվում են (սենյակ, բաժանմունք, վիրասրահ) պլաստիկ փակ բեռնարկղով, իսկ մանրէագերծման տուփով (բիքս) կատարված մանրէագերծումից հետո՝ սավանով կամ սայլակով:

ԳԼՈՒԽ 9. ԱԽՏԱՀԱՆՄԱՆ ԵՎ ՄԱՆՐԷԱԶԵՐԾՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ

44. Կազմակերպություններում ապահովվում է ախտահանման և մանրէագերծման գործընթացի արդյունավետությունը, որը մշտադիտարկվում է յուրաքանչյուր մանրէագերծման գործընթացի նկատմամբ՝ մանրէագերծումն իրականացնող անձի կողմից: Ախտահանման և մանրէագերծման գործընթացի արդյունավետության

մշտադիտարկումն իրականացվում է մանրէազերծող սարքերի աշխատանքային ռեժիմների հսկողության հետևյալ մեթոդներով.

1) ֆիզիկական՝ չափիչ սարքերի (ջերմաչափ, մանոմետր) միջոցով մանրէազերծող սարքի աշխատանքի ցուցանիշների (ջերմաստիճանի, ճնշման) օպերատիվ հսկողություն,

2) քիմիական զգայորոշիչների միջոցով, որոնք պարտադիր օգտագործվում են ըստ նշանակության՝ դրանց ուղեկցող հրահանգին համապատասխան և, կախված տեղադրումից, լինում են ներքին և արտաքին.

ա. արտաքին զգայորոշիչները առկա են փաթեթի վրա, իսկ որոնք չունեն՝ զգայորոշիչները փակցվում են բժշկական արտադրատեսակների փաթեթների վրա: Արտաքին զգայորոշիչները գնահատվում են անմիջապես մանրէազերծման ավարտից հետո,

բ. ներքին զգայորոշիչները տեղադրվում են մանրէազերծ տուփերում և գնահատվում են տուփը բացելուց հետո:

45. Ախտահանման և մանրէազերծման արդյունավետությունը գնահատվում է լաբորատոր հսկողությամբ՝ մանրէազերծված բժշկական արտադրատեսակների մանրէաբանական հետազոտության (ցանք) միջոցով:

46. Մանրէազերծող սարքերի տեխնիկական սպասարկումը, ընթացիկ վերանորոգման աշխատանքներն իրականացվում են Կազմակերպության սարքերի տեխնիկական սպասարկումն ապահովող ստորաբաժանման կողմից կամ պայմանագրային հիմունքներով՝ ապահովելով մանրէազերծման գործընթացում օգտագործվող սարքերի անխափան աշխատանքը:

47. Մանրէաբանական հետազոտությունները կազմակերպվում են պլանային՝ ամիսը մեկ անգամ պարբերականությամբ, ինչպես նաև արտահերթ՝ համաճարակաբանական ցուցումներով կամ մանրէազերծման գործընթացում թերություններ և խախտումներ հայտնաբերելիս:

48. Բժշկական կազմակերպությունում մաքրման, ախտահանման, նախամանրէազերծման և մանրէազերծման որակի հսկողության մանրէաբանական հետազոտություններն իրականացվում են բժշկական կազմակերպության մանրէաբանական լաբորատորիայում (առկայության դեպքում), իսկ բացակայության դեպքում՝ այլ մանրէաբանական լաբորատորիայում՝ պայմանագրային հիմունքներով, որոնք արձանագրվում են հետևյալ հաճախականությամբ և ծավալներով.

- 1) պլանային և համաճարակաբանական ցուցումով՝ հսկողության նպատակով ախտահանման որակի նմուշառում կատարվում է սանիտարացուցադրական մանրէների, ախտածին և պայմանական ախտածին մանրէների հայտնաբերման վերաբերյալ, հայտնի պատճառագիտական գործոնի (ախտածնի) դեպքում արտաքին միջավայրի հետազոտությունները կարելի է իրականացնել միայն վերջինիս վերաբերյալ,
- 2) մանրէաբանական հսկողություն իրականացվում է ծնարանում, վիրահատարանում, վիրակապարանում, միջամտությունների (մանիպուլյացիոն) սենյակներում, ինտենսիվ թերապիայի սենյակներում (ըստ համաճարակաբանական ցուցումի), ընդունարանում, շտապ և անհետաձգելի բուժօգնության բաժանմունքում և մանրէազերծման սենյակում: Հետազոտվում են՝ օդային միջավայրը, բժշկական արտադրատեսակները, վիրակապական նյութերը, վիրահատական սպիտակեղենը, սարքավորումները,
- 3) ներքին հսկողության ընթացքում հայտնաբերված միկրոօրգանիզմները հետազոտվում են ախտահանիչ նյութերի նկատմամբ զգայունության վերաբերյալ,
- 4) հիվանդանոցային պայմաններում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպություններում ախտահանման որակի գնահատման համար նմուշառումն իրականացվում է 2 մահճակալին՝ 1 լվացուկից ոչ պակաս հաշվարկով,
- 5) հիվանդանոցային պայմաններում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպությունում մանրէազերծման սենյակի առկայության դեպքում մանրէազերծման որակի հսկողության են ենթարկվում միաժամանակ մանրէազերծված նմուշների 1%-ը, սակայն 3-ից ոչ պակաս: Մանրէազերծման սենյակի բացակայության դեպքում, եթե մանրէազերծման գործընթացը կազմակերպվում է բաժանմունքներում, մանրէազերծման որակի հսկողության ենթակա են յուրաքանչյուր մանրէազերծման սենքի համար առնվազն 3 նմուշի հաշվարկով, բայց ընդհանուր ոչ պակաս 10 նմուշից (եթե բժշկական կազմակերպությունում առկա է մինչև 3 մանրէազերծման սենք), ինչպես նաև միջամտություն իրականացնող յուրաքանչյուր աշխատատեղի համար 3 նմուշի հաշվարկով, բայց ընդհանուր ոչ պակաս 10 նմուշից (եթե բժշկական կազմակերպությունում առկա է մինչև 3 աշխատասենյակ):

49. Վիրահատարանում, նախավիրահատարանում և մանրէազերծման սենյակում ախտահանման և մանրէազերծման որակի վերաբերյալ նմուշներում շեղումներ չպետք է լինեն:

50. Վերակենդանացման և ինտենսիվ թերապիայի բուժման հիվանդասենյակներում, միջամտությունների սենյակներում և ընդունարանում ախտահանման որակի վերաբերյալ նմուշներում շեղումները չպետք է գերազանցեն 10%-ը, իսկ մանրէազերծման որակի վերաբերյալ նմուշներում շեղումներ չպետք է լինեն:

51. Առողջության առաջնային պահպանման և ստոմատոլոգիական ծառայություն մատուցող կազմակերպություններում շրջակա միջավայրի մակերեսներից ախտահանման որակի և բժշկական արտադրատեսակների մանրէազերծման որակի նկատմամբ նմուշառումն իրականացվում է բժշկական կազմակերպության մանրէաբանական լաբորատորիայում (առկայության դեպքում), իսկ բացակայության դեպքում՝ այլ մանրէաբանական լաբորատորիայում՝ պայմանագրային հիմունքներով՝ պացիենտի զննության, ախտորոշման յուրաքանչյուր աշխատասենյակից, մանրէազերծման սենյակից 3 լվացուկի հաշվարկով, բայց ընդհանուր 10 լվացուկից ոչ պակաս (եթե կազմակերպությունում առկա է մինչև 3 աշխատասենյակ): Մանրէազերծման սենյակի առկայության դեպքում մանրէազերծման որակի վերաբերյալ հսկողության են ենթարկվում միաժամանակ մանրէազերծված նմուշների 1%-ը:

52. Ոչ բժշկական կազմակերպությունում շրջակա միջավայրի մակերեսներից ախտահանման որակի և բժշկական արտադրատեսակների մանրէազերծման որակի նկատմամբ նմուշառումն իրականացվում է մանրէաբանական լաբորատորիայում՝ պայմանագրային հիմունքներով՝ եռամսյակը մեկ անգամ, յուրաքանչյուր աշխատասենյակից 3 լվացուկի հաշվարկով, բայց ընդհանուր 10 լվացուկից ոչ պակաս (եթե կազմակերպությունում առկա է մինչև 3 աշխատասենյակ): Մանրէազերծման որակի վերաբերյալ հսկողության են ենթարկվում միաժամանակ մանրէազերծված նմուշների 1%-ը:

53. Օդային միջավայրի նմուշների թիվը կարող է կազմել ախտահանման որակի հսկողության ենթարկվող նմուշների 5-10%-ը:

**ՄԱՆՐԷԱԶԵՐԾ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ
ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

h/h	Փաթեթավորման տեսակ	Պահպանման ժամկետ
1.	Թուղթ, կտոր-գործվածք և ցեյուլոզա պարունակող նյութեր	3 օր
2.	Մանրէազերծման համար նախատեսված երկշերտ թուղթ, կտոր՝ սինթետիկ հիմքի վրա	2 ամիս
3.	Թղթե և պլաստիկե համակցված նյութ ապարատով ջերմության միջոցով փակված	6 ամիս
4.	Թղթե և պլաստիկե համակցված նյութ զգայորոշիչ փաթեթավորման ժապավենով փակված	3 ամիս

Ձև 1

ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ

ԳՈԼՈՐՇԱՅԻՆ ՄԵԹՈԴՈՎ ՄԱՆՐԷԱԶԵՐԾՄԱՆ

Բաժանմունք (սենյակ) _____

Մանրէազերծող սարքի մակնիշը _____

Գրանցման սկիզբը _____

Ավարտված է _____

Ամսաթիվ	Բժշկական արտադրատեսակների անվանում/լրակազմ	Ավտոկլավի միացման ժամ	Մանրէազերծման ռեժիմ				Մանրէազերծող սարքի աշխատանքի հսկողություն (քիմիական զգայորոշիչ)	Կատարողի ստորագրություն
			Սկիզբ ժամ	Վերջ, ժամ	Ճնշում	Ջերմաստիճան		
1	2	3	4	5	6	7	8	9

